ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 6-րդ փողոցը՝ նրբանցքներով, անվանակոչել հայ քանդակագործ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Արա Հարությունյանի անվամբ՝ «Արա Հարությունյան փողոց», «Արա Հարությունյան փողոցի 1-ին նրբանցք», «Արա Հարությունյան փողոցի 2-րդ նրբանցք»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ քանդակագործ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Արա Հարությունյանը ծնվել է 1928թ. մարտի 28-ին Երևանում:

Մանուկ հասակում Հարությունյանը հետաքրքրված էր թատրոնով, գեղանկարչությամբ, հատկապես Միխայիլ Վրուբելի արվեստով: Մի անգամ՝ մանուկ հասակում, ձեռքի տակ եղած գործիքներով տուֆի կտորի վրա տաշել է Անահիտ աստվածուհուն նմանվող կանացի գլուխ: Աշխատանքը բարձր է գնահատել հայկական զարդանախշի և մանրանկարչության գիտակ նկարիչ Տարագրոսը: 7-րդ դասարանն ավարտելուց հետո (1943թ.) Հարությունյանն ընդունվել է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարան: Սովորել է Գրիգոր Ահարոնյանի արվեստանոցում, ով ծանոթացնում էր աշակերտներին եվրոպական մշակույթի պատմությանը՝ ձևավորելով նրանց ճաշակը և ընդարձակելով մտահորիզոնը: 1948թ. Հարությունյանի ուսանողական երկու աշխատանքներ ցուցադրվել են Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի նախասրահում: Ուսումնարանն ավարտելուց հետո Հարությունյանն ընդունվել է Երևանի պետական գեղարվեստա-թատերական ինստիտուտ, որը գերազանցությամբ ավարտել է 1954 թվականին: Քանդակագործի դիպլոմային աշխատանքն էր Կոմիտասի բրոնզե արձանը, որը մրցույթում շահելով՝ տեղադրվեց երգահանի շիրիմին: 1960-ական թվականներից Ա. Հարությունյանի ստեղծագործական կյանքում սկսվում է բեղմնավոր շրջան մոնումենտալ քանդակագործությունում: Նա առաջիններից է ստեղծում ճարտարապետա-քանդակային համալիրները Խորհրդային Հայաստանում: Հարությունյանի շնորհիվ Հայաստանում հայտնվեցին կառույցների ճարտարապետությանը համահունչ հարթաքանդակներ: 1968-1969 թվականներին Հարությունյանն իր հարթաքանդակներով ձևավորում է Էրեբունի թանգարանի շենքը (գլխավոր ճակատամուտք՝ «Արգիշտի թագավորը և քաղաքի հիմնադիրները», հարավային ճակատամուտքը՝ «Առյուծաորս», հյուսիսային ճակատամուտք՝ «Խալդի աստվածը»), ինչի համար 1970 թվականին արժանացավ ԽՍՀՄ ճարտարապետների միության դիպլոմի: 1966-1967 թվականներին Հարությունյանը ստեղծում է իր սիրելի գործերից մեկը՝ Գաբրիել Սունդուկյանի անվան ակադեմիական դրամատիկական թատրոնի քանդակային համալիրը, որտեղ ներկայացված է հայ թատրոնի գրեթե 2000-ամյա պատմությունը:

Հայ ժողովրդի պատմա-մշակութային իրադարձություններն իրենց մարմնավորումն են գտել Երևանի հյուսիսային և հարավային մուտքերի մոտ տեղադրված «Վահագն վիշապաքաղ» (1965թ.) և «Արծիվ շինարարը» (1966թ.) կոմպոզիցիաներում, Երևանի գինու գործարանի «Պայքար առյուծի հետ» և «Աղվեսներ» հարթաքանդակներում (1961թ.):

1964 թվականին Արա Հարությունյանն արժանացավ ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի արծաթե մեդալին «Սայաթ-Նովա» աղբյուր-հուշարձանի համար, որը համարվում է քաղաքային միջավայրում ճարտարապետա-քանդակային միկրոանսամբլի լավագույն օրինակներից մեկը:

1967 թվականին Հարությունյանն իրականացրեց իր կարևոր նախագծերից մեկը՝ Երևանի «Հաղթանակ» զբոսայգում տեղադրվեց նրա «Մայր Հայաստան» հուշակոթողը: Սա Հայաստանի ամենամեծ հուշակոթողն է՝ բարձրությունը պատվանդանի հետ միասին կազմում է 54 մետր, կոփածո պղնձե արձանի բարձրությունը՝ 22 մ, քաշը՝ մոտ 22 տոննա:

1978 թվականին Հարությունյանը կոփածո պղնձից ստեղծում է «Մուսա» դեկորատիվ քանդակը, որը զարդարում է Երևանի լրագրողների շենքը: Հենց այդ շենքում է 25 տարի ապրել քանդակագործը:

Արա Հարությունյանի գործերը ներկայացված են աշխարհի թանգարաններում և մշակութային օջախներում՝ Հայաստանի ազգային պատկերասրահում, Մոսկվայի Տրետյակովյան պետական պատկերասրահում, Արևելքի ժողովուրդների արվեստի պետական թանգարանում, Նկարիչների միության միջազգային կոնֆեդերացիայում, ինչպես նաև Իտալիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ռուսաստանի, Հայաստանի և այլ երկրների պատկերասրահներում և մասնավոր հավաքածուներում:

Արա Հարությունյանը 1955 թվականին դարձել է ՀԽՍՀ և ԽՍՀՄ նկարիչների միության անդամ, 1964 թվականից՝ ՀԽՍՀ նկարիչների միության նախագահության անդամ, 1977 թվականից՝ վարչության անդամ: Նույն թվականին արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական նկարչի կոչմանը: 1988 թվականին ընտրվել է ԽՍՀՄ և Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի թղթակից-անդամ և ստացել պրոֆեսորի կոչում:

Արա Հարությունյանը մահացել է 1999 թ. փետրվարի 28-ին Երևանում::

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 6-րդ փողոցը՝ նրբանցքներով, անվանակոչել հայ քանդակագործ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Արա Հարությունյանի անվամբ՝ «Արա Հարությունյան փողոց», «Արա Հարությունյան փողոցի 1-ին նրբանցք», «Արա Հարությունյան փողոցի 2-րդ նրբանցք»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Արա Հարությունյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Արա Հարությունյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ